



ՀԱՄԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան  
« 24 » 03 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 031 - 24

Ձեռնարկողը՝

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ  
ք. Երևան, Իսրայելյան փ., 39/2 շենք

Գործունեությունը՝ Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



Էսաշիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 031 - 24

« 27 » Մարտի 2024թ.

**Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք  
Ծովակ բնակավայր

**Ներածական մաս** Ծովակի պեմզային ավազի հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում, Ծովակ բնակավայրի վարչական տարածքում: Հայցվող տարածքի հեռավորությունը Վարդենիս քաղաքից՝ կազմում է 6-7կմ, ամենակարճ հեռավորությունը մինչև Սևանա լիճը 2.7 կմ է:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային սեփականություն հանդիսացող 05-071-0252-0101 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող և այլ հողեր:

**Նկարագրական մաս.** Նախատեսվում է իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ Ծովակի հանքավայրի կենտրոնական և հարավարևմտյան տեղամասերում, 60 հա մակերեսով տարածքի վրա: Աշխատանքներն իրականացվելու են հետախուզառուններով և հորատանցքերով:

Նախատեսվում է կատարել պեմզային ավազների ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկությունների լաբորատոր փորձարկումներ և պարզաբանել դրանց համապատասխանությունը 9757-83 և 8736-95 ՀՍ տեխնիկական պահանջներին՝ որպես բետոնի բաղադրիչ ստորգետնյա դատարկ տարածքների լցափակման նպատակով:



Հայցվող տարածքը սահմանափակվում է հետևյալ եզրային կոորդինատներով (ըստ ArmWGS-84 համակարգի):

Y	X
1. 8554680	4449893
2. 8555207	4449507
3. 8555491	4449450
4. 8555493	4448955
5. 8554973	4448958
6. 8554590	4449370
7. 8554385	4449808

Նախատեսվում է հետախուզական աշխատանքներն իրականացնել գլխավորապես հարատանցքերի օգնությամբ: Հորատանցքերի խորությունը նախատեսվում է 25-40մ: Նախագծով նախատեսվում է հորատել 5 հորատանցք, ընդհանուր 180 գծ.մ. ծավալով: Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ-2.5Ա կամ համանման ինքնագնաց հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 112-132մմ տրամագծով: Որի համար 5 անգամ կկատարվի հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում: Հորատահանուկի նվազագույն ելքը յուրաքանչյուր երթում պետք է լինի 80%-ից ոչ պակաս:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները՝ հետախուզառունները, հորատահանուկը և մերկացումները:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների, քիմիական կազմի որոշման, ինչպես նաև տեխնոլոգիական հատկանիշների՝ որպես ստորգետնյա դատարկությունները լցափակելու նպատակով կիրառվող պնդացող խառնուրդի (թեթև բետոնի) ստացման լցանյութ, պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերից, հետախուզառուններից, արհեստական մերկացումներից կատարել նմուշարկում:

Նախագծով նախատեսվում է յուրաքանչյուր հետախուզաառվից վերցնել 1-ական նմուշ: Նմուշարկումը պետք է կատարվի ակոսային եղանակով: Նմուշները պետք է ունենան մինչև 2.0մ երկարություն, 0.1մ լայնություն և 0.1մ խորություն: Ակոսային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 8 հատ: Հորատանցքերից նախատեսվում է նմուշարկել 5 մ երկարությամբ, 20-25 հանուկային նմուշ պեմզային ավազներից:

Հրաբխային պեմզային ավազների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է անալիզի ենթարկել 2 միացյալ նմուշներ՝ հորատահանուկից: Ծավալային զանգվածը և փխրեցման գործակցի որոշումը կկատարվի 2 հետախուզաառուններից կատարված նմուշարկմամբ: 4 միացյալ նմուշներ կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների: Ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական փորձարկումների նախատեսվում է ենթարկել ընդհանուրը 8 միասնական նմուշ՝ 4-ը ակոսային և 4-ը հանուկային նմուշներից:

Նմուշների ֆիզիկամեխանիկական և քիմիական անալիզները նախատեսվում է կատարել «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում, տեխնոլոգիական ուսումնասիրությունները՝ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գեոմեխանիկայի և լեռնային աշխատանքների լաբորատորիայում:



**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- Էքսկավատորը պետք է աշխատի բարձր որակի դիզվառեվիքով, շարժիչի վառուցքը պետք է լինի կարգավորված, պետք է տեղադրված լինի կատալիտիկ չեզոքացուցիչ, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ:
- Հորատման հաստոցը պետք է կահավորված լինի փոշեռսիչով, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները:
- Բացառել քսայուղերի արտահոսքը գրունտի վրա:
- Տաք և չոր եղանակին հորատման կամ փորման աշխատանքների հրապարակը պետք է ջրցանվի, ինչը թույլ կտա կրճատել փոշու արտանետումները:
- Հետախուզառուները անցնելուց և նմուշառումից հետո կատարվելու է հետլիցք:

**ՓՈՐՃԱՔՆՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ներքին գործերի նախարարությունները, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, շրջակա միջավայրի նախարարության ներքին ստորաբաժանումները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանը:

-Փորձաքննական գործընթացում պարզվել է, որ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գտնվում է Սևանա լճից 2.7կմ հեռավորության վրա, սահմանակից է «Սևան» ազգային պարկին: Ըստ ներկայացված կոորդինատների նշված տեղամասի հեռավորությունը «Սևան» ազգային պարկի սահմաններից, չի գերազանցում մինչև 750 մետրը:

Երկրաբանական ուսումնասիրությունը և հետազայում հնարավոր արդյունահանման աշխատանքները կառաջացնեն վնասակար ազդեցություններ ազգային պարկի անտառածածկ տարածքների և Սևանա լճի էկոհամակարգի վրա, ինչը հակասում է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածին և 10-րդ հոդվածի 1-ին մասին:

Օրենսդրությամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Ծովակ բնակավայրում անցկացվել է հանրային քննարկում: Հանրային քննարկման ընթացքում բոլոր մասնակիցները դեմ են արտահայտվել Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը՝ հիմնավորելով արդյունահանման աշխատանքների հնարավոր վնասակար ազդեցությունները համայնքի բնակչության և հարևանությամբ գտնվող օբյեկտների /բնակելի տներ, այլ քաղաքացիների պատկանող հողատարածք/ վրա:

Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ին հասցեագրված գրությամբ հայտնել է, որ դեմ է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական



ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը, հաշվի առնելով Ծովակ բնակավայրի բնակիչների կարծիքներն ու մտահոգությունները:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ծովակի պեմզային ավազների հանքավայրում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ *Դ. Արթուրյան* Հովհն Մեսրոպյան

